ԼԻԲԵՐԱԼ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՌՀ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀՈՒՇԱԳԻՐ

«Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը
(հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 1, 24, այսուհետ՝ «Ինստիտուտ»)՝ ի դեմս Ինստսիտուտի խորհրդի անդամ **Շուշանիկ Ավագյանի,** և
Հայաստանի Հանրապետության Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
(հասցե՝ Երևան, Իսահակյան 28, այսուհետ՝ «ՀՌՀ»)՝ ի դեմս ՀՌՀ անդամ
Նունե Հախվերդյանի,

Հաշվի առնելով ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ողջ աշխարհում անհանգստացնող արագությամբ կարգավորումներից դուրս և ուղղորդված լրատվություն տարածող կազմակերպությունների ծավալումը,

Տեսնելով ատելության խոսքի լսարանի բազմապատկումը, ինչպես նաև հասարակության ծայրահեղ բևեռացումը մեդիա և համացանցային ռեսուրսների կիրառությամբ,

Հաշվի առնելով տարբեր երկրներում ժամանակակից կարգավորումներն ուղղված մեդիա դաշտի հաշվետվողականության և թափանցիկության ապահովմանը,

Հասկանալով, որ ատելության խոսքը, հանրային բևեռացումը, ուղղորդված քարեզչությունը կարող են ունենալ չափազանց ծանր հետևանքներ ատելության խոսքով թիրախավորված անձանց և խմբերի համար՝ հանգեցնելով նրանց հիմնարար իրավունքների խախտմանը,

Նպատակ ունենալով պայքարել խտրականության, մերժողականության և անհանդուրժողականության, ոչ թափանցիկ գործունեության դեմ,

Հստակ արձանագրելով, որ ատելության խոսքը, քողարկված կամ ուղղորդված հանրային կարծիք ձևավորող գործունեությունը չի կարող պաշտպանվել կարծիքն ազատ արտահայտելու իրավունքով և հաճախ ինքնին սահմանափակում է կարծիքի արտահայտման սահմանադրական ազատությունը և

Առաջնորդվելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը նվիրված միջազգային և ներպետական ակտերով ընդունված սկզբունքներով՝

2024 թվականի մայիսի 29-ին սույն հուշագրի ստորագրմամբ պայմանավորվեցին համագործակցել ի պաշտպանություն անկախ, անաչառ, անկողմնակալ, մասնագիտական տեղեկատվության տարածմանը նպաստելու միջոցով առավել թափանցիկ և հաշվետու մեդիա դաշտի ստեղծման:

«Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» ՀԿ խորհրդի անդամ	**Հայաստանի Հանրապետության Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ**
Շուշանիկ Ավագյան	**Նունե Հախվերդյան**
_____	_____